ՀԱՄԱՍՏԵՂ
(1895-1966)

Համաստեղ Հայաստան երթալու է,
այդ հայ հողի ծաղիկներով հորինված
երանգապնակն ունեցող թանկագին
արվեստագետը պետք չէ ձգել, որ
Ամերիկայի գործարաններուն
մուխին մեջ դժգունի:

Արշակ Չոպանյան

- Կենսագրական տեղեկություններ
- Ժամանակակիցները՝ Համաստեղի մասին
- «Չալո»
- Լրացուցիչ նյութեր

Համաստեղը «Կարոտի գրականության» ամենանշանավոր դեմքերից է: Նա իր ստեղծագործություններով լսելի էր դարձնում հեռուներից եկող ազգային արմատների կանչը: Համաստեղի բազմաժանր ու հարուստ գրականությունը հայ ժողովրդի «ապրելու հզոր տենչանքի» հաստատումն է:

ԿԵՆՍԱԳՐԱԿԱՆ ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Համբարձում Օհաննեսի Կելենյանը ծնվել է 1895 թ. Արևմտյան Հայաստանի Խարբերդի գավառի Փերչենճ գյուղում: Համաստեղի՝ Համբարձում Կելենյանի գրական կեղծանունը կազմված է իր և երկու եղբայրների՝ Աստուրի և Եղիայի անունների սկզբնատառերից (Համ-Աստ-Եղ):

Սկզբնական կրթությունը ստացել է ծննդավայրի դպրոցում, ապա Մեզիրե քաղաքի Կեդրոնական վարժարանում, որն ավարտել է 1911 թ.: Դրանից հետ մեկ տարի զբաղվել է ուսուցչությամբ: 1913 թ. մեկնել է Ամերիկա: Եղել է դաշնակցության անդամ: Նյու-Յորքում ծանոթացել է Շիրվանզադեի, իսկ Փարիզում՝ Ավետիք Իսահակյանի հետ: Համաստեղի գրական հայացքների ձևավորման ու զարգացման վրա որոշակի ազդեցություն են գործել նաև Հովհաննես Թումանյանը, Դանիել Վարուժանը և Սիամանթոն: Լույս են տեսել նրա

հետևյալ ստեղծագործությունները՝ «Գյուղը» (1924), «Անձրևը» (1929), «Սպիտակ ձիավորը» (1953), «Քաջ Նազար և 13 պատմվածքներ» (1955), «Աղոթարան» (1957), «Այծետոմարը» (1960), «Առաջին սերը» (1966): 1989 թ. Երևանում լույս տեսավ Համաստեղի «Հայաստանի լեռներու սրնգահարը» խորագրով մեծածավալ ժողովածուն: Համաստեղը գյուղագիր է: Նրա հերոսները հասարակ աշխատավոր մարդիկ են, որոնք անձի երջանկությունը տեսնում են հողի և նրա վրա թափած քրտնաջան աշխատանքի մեջ: Այդ հերոսները սիրում են կյանքը, բնությունը, անասուններին: Համաստեղը նաև հոգեբան է: Նա ցայտուն գծերով կերտել է գաղթականների ու պանդուխտների կերպարներ, որոնց անձնական ողբերգությունը առավել խորանում է՝ հարազատ օջախից ու հողից կտրված լինելու գիտակցումից:

Հանկարծամահ է եղել 1966 թ. նոյեմբերի 26-ին Ամերիկայում իր ծննդյան 70-ամյակի հոբելյանական հանդիսության պահին:

Մեծերը Համաստեղի մասին

Հիսուն տարիներ ի վեր շարունակ այդ հոգին ապրեցավ և լուսավորեց, նահատակ ամբողջ ժողովուրդի մը վիշտը իր մեջ առած, պայծառ տեսիլքովը Մայր Հայաստանի վերածնունդին:

Վազգեն Ա կաթողիկոս Ամենայն հայոց



Համաստեղը չէր ըլլար ինչ որ է, եթե Թլկատինցին, Զարդարյանը ու քանի մը եվրոպացի մեծ վիպողներ իր առաջին քայլերուն իբր ուղեցույց առած չըլլար:

Արշակ Չոպանյան

Ամփոփիչ հարցեր

1. Ո՞րն է Համաստեղի իսկական անունը, ազգանունը:
2. Ինչպե՞ս է առաջացել «Համաստեղ» գրական անունը:
3. Ե՞րբ և որտե՞ղ է ծնվել Համաստեղը:
4. Ի՞նչ կրթություն է ստացել նա:
5. Համաստեղի ստեղծագործական կյանքի վրա ո՞ր գրողներն են ազդեցություն թողել:
6. Որո՞նք են նրա ժողովածուները: Թվարկի՛ր դրանք:
7. Ի՞նչ թեմաներով է ստեղծագործել Համաստեղը:

Առաջադրանքներ և վարժություններ

1. Օգտվելով Համաստեղի կենսագրությունից՝ ներկայացրո՛ւ գրողի դերն ու նշանակությունը մեր գրականության պատմության մեջ:
2. Ներկայացրո՛ւ Համաստեղի կենսագրության հիմնական փաստերը, կապի՛ր դրանք նրա ստեղծագործությունների հետ:
3. Կենսագրությունից ելնելով՝ գնահատի՛ր Համաստեղի կյանքն ու ստեղծագործությունը նրա ապրած ժամանակաշրջանի համատեքստում:
4. Արտահայտի՛ր սեփական կարծիք գրողի կյանքի մասին և նրա կյանքի պատմությունը կապի՛ր իրականության և ժամանակաշրջանի անցուդարձի հետ:
5. Գտի՛ր օրինաչափություններ Համաստեղի և քեզ ծանոթ այլ գրողների միջև:

ՉԱԼՈ

1

Ավելի ծեր, քան մեր գյուղին երեցփոխը. սակայն անոր պես ակնոց չէր գործածեր Չալոն:

Երկու լայն տերևներու նման ականջները կախ էին, պոչը՝ թույլ, այլևս կռնակին վրա կծկելու անկարող: Ծանր ու միշտ վար ինկած կոպերը աչքերուն մելամաղձոտ երևույթ մը կուտային: Դեմքը խորհրդավոր էր մանավանդ, երբ ճամփուն վրա, միայնակ, դունչը լուսնկային տնկած, լուսնկան կհոտվտար:

Մեր գյուղի լուսնկան ալ, բոլոր գյուղի լուսնկաներուն պես, եկեղեցիի գմբեթեն չէր հեռանար. շատ անգամ անոր վրա կիյնար, հոն կհանգչեր: Չալոյին դունչը, հյուսիս երկարող մագնիսի մը պես, այն կողմն էր միշտ, կկաղկանձեր ու կոռնար պղինձի պես արձագանքվող քարայրներու ձայնով:

Ուաո՛ւ... ուաո՛ւ... ուաո՛ւ...

«Չալո՛, օշտ, Չալո՛»,- կարթննային, ձայն կուտային դրացիները: Եվ Չալոն լռեցնելու համար մութին մեջ կոշիկ, կուժի կտորներ վար կնետեին:

Գեշ նշան էր:

Չալոն կսթափեր. կճանչնար անոնց ձայնը: Ցվիքին մոտ, շապիկ մը վրան մերկ սրունքը քերող Ուստա Զաքարն էր:

«Հեյ, Չալո, օր մ՚ ալ էս Սուրբիկին մեռնելու խապարը չտա՞ս»:

Կկատակեր Ուստան քնեն թափթփած աչքերու խնդուքով:

Ծեր, իր կյանքին վրա դողդողացող որբևայրի Սուրբիկը կլսեր. փոքրիկ պատուհանեն կախված դեղին սեխի մը պես դեմքը երերցնելով կհայհոյեր, կտրտռար, մութին մեջ կանիծեր անվերջ:

Ուստա Զաքարին հաճույքն այլ այդ էր:

Շատ անգամ մեռել չկար, սակայն ո՞վ հասկցած էր Չալոյին և լուսնկային գաղտնիքը կախարդական,- ա՜յնքան կախարդական, որքան գմբեթին և լուսնկային մտերմությունն էր Չալոյին համար:

Չալոն կլռեր. կսիրեր իր մտերիմ ձայները լսել իր մինակութենեն չսարսափելու համար: Ոտքերուն վրա կելլեր, պոչը կերերցներ, հետո, երբ Ուստան հեռանար ցվիքեն, Չալոն փոշիներուն վրա կերկննար, լեզուն ներս կառներ, ու դունչը երկու խաչաձև ոտքերուն վրա երկնցուցած՝ կքնանար անհանգիստ, ընդհատ-ընդհատ կաղկանձումով:

Լռության մեջ Չալոն քանի մը անգամ գլուխը վեր կառներ: Ոչինչ, թերևս ցվիքեն կատու մըն էր, որ անցավ, և կամ փողոցին հսկա սայլն էր, որ մեծ շունչ մ՚ առավ:

«Է՜հ, սա սայլերը ո՜րքան ծույլ ու խորունկ կքնանան. չեն արթննար, մինչև որ մարդիկ չգան, չհրմշտկեն, ականջները չանցնեն, եզները չլծեն. այն ատեն միայն կարթննան, ու կսկսին դեպի դաշտ քնաթաթախ, լալկան ճղրտուք մը»,- կմտածեր Չալոն:

Լուսադեմին, խորունկ անդունդեն եկող ոտնաձայնե մը կարթննար միշտ: Չալոն կճանչնար այդ ոտնաձայնը. կելլեր, կռնակին փոշիները կթոթվոտեր, բերանը լայն բացած կհորանջեր ու կքալեր այն ուղղությամբ, ուրկե ժամկոչը պիտի գար:

Չալոն, պոչին վրա քսվելով, կմոտենար անոր. խնկահոտ փեշերը կհոտվտար այնպես, ինչպես բորոտներ Հիսուսի փեշերուն պիտի քսվեին, ջերմեռանդ ու երկյուղածորեն, որովհետև Չալոյին համար բովանդակ տիեզերքին մեջ չկար այնքան ամենակարող մեկը, որքան ժամկոչն էր:

Արևը անոր ոտնաձայնեն կարթննար, ու աստղերը մեկիկ-մեկիկ կպահվեին. լուսնկան կտժգուներ, թիթեղի գույն կառներ, երբ ժամկոչը դուրս կելլեր տուներեն: Անոր ոտնաձայնեն պատերուն ստվերները՝ տենդե բռնված՝ կդողդողային: Արդյոք ժամկոչին հրամանովը չէ՞ր, որ լուսնկան գիշերները գմբեթեն չէր հեռանար: Ժամկոչը, եթե ուզե, նույնիսկ մսավաճառ Կյուրեղի բոլոր միսերը վար կառնե ու շուներուն կբաշխե: Ժամկոչի զորությունը մեծ էր Չալոյին համար:

Իրավ ալ, ժամկոչի ոտնաձայնեն արևը կարթննար, աքաղաղներն անոր անցքը կշեփորեին. ստվերները տան սողնոցներեն ներս անկյունները կսողոսկեին:

Գյուղին մեջ կսկսեր եռուզեռ մը:

Գոթանենց տան մշակները եզները դուրս կհանեին, խոփերը կնիչեցնեին՝ ակամա քարերուն զարնելով, եզներու վզին սամիները կկապեին, ու քոթոթ՝ մեկ ականջին ներսի մասը դուրս շրջված իշու մը վրա կբառնային սերմնցու ցորենը:

Չալոն հոն էր. ու ետևի երկու ոտքերուն վրա պպզած՝ արագ-արագ իր թավ պոչը գետին կզարներ,- նշան իր բարի ու անսահման ուրախության:

Որքա՜ն կարոտցեր էր մարդիկ:

Ու ձիերու մետաղային խրխինջներուն ու աքաղաղներու սուր կանչերուն ու մշակներու աշխատանքին հետ, Չալոն ալ մերթ ընդ մերթ իր բամբ ձայնը կձգեր՝ գոհ և խնդումերես:

Չալոն, իր ծանր պոչը գետին քսելով, վիզը կախ, մինչև խաչաղբյուր ճամփու կդներ մշակները ու կվերադառնար հոն, ուր շուկայի քոթոթ շուները՝ վաղուց դիրք գրաված, անհամբեր կսպասեին մսավաճառ Կյուրեղին:

Կյուրեղ կուշանար:

Շուներեն շատերն իրենց վրա քթվտելով զբաղած էին. մեկը իր վերքը կլիզեր, ուրիշ մը երեք ոտքերու վրա կաղալեն դեռ նոր չորցած արյունը կլիզեր. տկլոր ու քոսոտ շուներ՝ մազերնին թափած:

Այդ բոլորին մեջ է՛ն լուրջը Չալոն էր՝ մտածկոտ դիմագծով, պատկառելի, ինչպես դատավոր մը:

Կյուրեղ կուգար իր ատենին, սակայն շուներուն այնպես կթվեր, թե ան միշտ կուշանար:

Փողոցի անկյունեն կտեսնվեր Կյուրեղ, յուղոտ կողքով մայր տոմարը անութին տակ, այս անգամ այծի մը հետ կքաշքշվեր:

Կյուրեղի ամեն մեկ շարժումին կհետևեին շուները՝ անհանգիստ, սլվլուկ աչքերով: Երբ ան պատահաբար իրենց մոտենալու ըլլար, բոլորն ալ իրարու վրա կիյնային, ճամփա կուտային: Անոր տրամադրությունը հասկնալը շուներու համար շատ դժվար և իմաստուն աշխատանք էր:

Է՜հ, ի՜նչ ուժ. Կյուրեղ մատի փոքրիկ շարժումով մը կբանար դուռը: Շուները անոր ուժեն, անոր դիվային կերպարանքեն կսարսափեին, որովհետև շատերը անոր հարվածներեն հաշմանդամ դարձեր էին:

Ամփոփիչ հարցեր

1. Ո՞վ էր Չալոն: Ինչպե՞ս է նկարագրում նրա արտաքինը հեղինակը:
2. Ո՞վ է Զաքարը: Ինչի՞ց է հաճույք ստանում նա:
3. Գմբեթի, լուսնկայի և Չալոյի մտերմությունը ինչպե՞ս է ներկայացնում հեղինակը:
4. Գյուղացիները ի՞նչ վերաբերմունք են ցուցաբերում Չալոյի նկատմամբ:
5. Չալոն ինչպե՞ս է դիմավորում կոչնակին:

6. Ի՞նչ հիշեցրեց քեզ այս պատմվածքը: Ի՞նչ համանման պատմություն ես ընթերցել կամ կինոնկար դիտել:

Առաջադրանքներ և վարժություններ

1. Նկարագրի՛ր միջավայրը, որտեղ տեղի են ունենում պատմվածքի գործողությունները:
2. Նկարագրի՛ր գյուղի առավոտը հեղինակային բառապաշարով: Դո՛ւրս գրիր գյուղի հեղինակային նկարագրությունները:
3. Ի՞նչ զգացումներ ունես կենդանիների հանդեպ: Ինչպիսի՞ն է Չալոն:
4. Բնութագրի՛ր Կյուրեղին: Ներկայացրո՛ւ գյուղի շների և նրա փոխհարաբերությունները:
5. Ի՞նչ վերաբերմունք ունի հեղինակը գյուղի հանդեպ: Արտահայտի՛ր քո վերաբերմունքը:

2

Շուներուն այնպես կթվեր, թե Կյուրեղի դեմքին բոլոր զգայարանները իրենց տեղերեն խախտած էին: Այդ երևույթը կուտային մասնավորապես անոր թավ հոնքերուն տակ ապաստանող շիլ աչքերը: Խոշոր քիթը կարծես ճակատին մեջտեղեն կախված էր. ակռաները սխալ շարված էին. ականջները վեր-վար փակցված: Անոնց այնպես կթվեր, թե այդ զգայարանքները բոլորը մեկ կշարժեին, երբ կբարկանար և կամ մսին գինը կպոռար: Չալոն մանավանդ աչքերը չէր հեռացներ Կյուրեղին եղջյուրաձև պեխերուն քովի այն խոշոր խալեն, որ պիծակի գույն, պիծակի ձև ուներ, սակայն քթին քովեն չէր հեռանար:

Կյուրեղ դանակով լեզուն կաշիե գոտին կկապեր, արյունոտ, կապույտ շապիկը կհագներ ու դուրս կելլեր: Հոն այծին շուրջը կհավաքվեին գեղին կոշկարն ու արոր, մաճ շինող Ուստա Զաքարը. կանուխ կուգար նաև երեցփոխը իր ճաշին համար լավ երշիկցու մը ապահովելու:

«Լավ մսացու է, հը»,- կգովեր երեցփոխը: Չալոյին կարծիքն ալ այդ էր:

Իսկ այծը կորոճար արագ, մկրատի նման իր կզակները շարժելով: Ուներ փոքրիկ մորուք մը, որ կշարժեր կզակին հետ արագ-արագ: Անոր աչքերը կապտորակ քարերուն ու կանաչ մամուռներուն վրայեն սահող առվակի գույնն ունեին: Անմեղ, սիրուն այծ մը, որ թերևս երեկ, բլուրին վրա, փունջ մը խոտ բերանին՝ կապույտ ճանճի մը բզզյունին կունկնդրեր, այժմ՝ անգիտակ իր վախճանին՝ կորոճար, հաճախակի կճղակները գետին կզարներ աղտոտ ճանճերը քշելու համար, նույնիսկ եղջյուր կբռներ իրեն շատ մոտեցող աղտոտ շուներուն:

Կյուրեղ անգամ մըն ալ իր դանակը երկաթին կքսեր ու այծին կոտոշներեն կքակեր կապը հետո՝ դանակը կխպածներ. մեջքը դևի մը պես այծին վրա կծռեր, կբռներ անոր երկու ոտքերն ու թըփ գետին կձգեր:

Այծը կաղաչեր, օտարոտի ու լալկան մայունով: Ցորյաններուն վրա բոլորակ դարձող փոքրիկ փոթորիկ մը կըլլար, կցնցվեր, կթփրտար. այդքան միայն: Արյունը միայն շուներուն վրա կցայտեր: Շուները ավելի կմոտենային, կխռային, կխռխռային, արյունը լակելու համար զիրար կհրմշտկեին:

Այդ շուներուն մեջ առաջնությունը Չալոյինն էր. շատ հեղ ուրիշ խոշոր շան մը հետ, դեմ դեմի, կսկսեր շատ կարճ զզվռտուք մը, որ կվերջանար իր հաղթությունով. քոսոտներուն մեջեն հանկարծ կպատժեր փոքրիկ, աներես շնիկ մը, որ ճչալով անկյուն մը կքաշվեր:

Շունները կվախնային Չալոյեն. թեև տարիքոտ, սակայն վարպետ կռվող մըն էր:

Մատղաշ արևը, ճարպոտ մսի գույնով,- ինչպես կնկատեր Չալոն,- ցվիքներեն վար կկախվեր ու հետզհետե վար կուգար, կճերմկնար, կհասներ մինչև այծի փոստին, որուն վրա Կյուրեղ փոքրիկ կացինով այծի ոսկորները կոտրած ու ջարդած էր միսը, որ ներկված էր կարմիր ու ճերմակ գեղեցիկ գույներով:

Կյուրեղ մսի կտորները կեռերուն վրա կշարեր: Օ՜հ այդ կետերը այնքան բարձր էին Չալոյին համար, որքան երկինքն էր:

Շուներեն շատեր կսպասեին. կացինի հարվածներեն նետված ոսկորի կտորներուն ետևեն կվազեին. կսպասեին, մինչև որ բոլոր միսերը կեռերուն վրա կախվեին. մինչև որ կտոր-կտոր ծախվեին. մինչև որ միսը հատնելու ըլլար:

Չալոն սպասող շուներեն չէր: Երեցփոխին ուսերուն պես կհավաքեր իր պոչը ու իր բնակած փողոցը կերթար, ուր արդեն մանուկները վաղուց արթնցած էին. բուխարիկներեն ծուխը վաղուց սկսած էր, ու ժամվորներ դուրս կուգային: Չալոն եկեղեցիին ճամփուն վրա կկենար, կխառնվեր անոնց հետ ջերմեռանդ ժամվորի պես:

Ժամվորները կանցնեին, Արևին հետ, փողոցին մեջ կմաղվեր հացի բարկ հոտ մը:

Գոթանենք հաց կթխեին:

Բարկ թոնիրին վերև հացթուխը՝ բոցեն կարմրած, թոնիրին վրա կծռեր, կելլեր, վրան գլուխը գորշ շորերով փաթաթված: Հարսներ, աղջիկներ գունդ կգնտեին, պլիկ կբանային մեծ ու կլոր լուսնկին պես: Պլիկները խոնջայե խոնջա կնետեին, մինչև որ հասնեին հացթուխ Սառիկին, Սառիկը կառներ, մալեզ կքսեր ու արագ, շատ արագ թոնիրի կարմիր կողին կտաներ:

Լուռ ու հանդարտ շուքի մը պես՝ կրակտան դռան վրա կեցողը Չալոն էր: Գլուխը վեր վար կշարժեր, պոչը կերերցներ: Օ՜հ, այդ պահուն, անոր աչքերը որքա՜ն բարի էին, մեռոնի գույն ունեին, կարծես մեռոնի երկու խոշոր կաթիլներ ըլլային:

Չալոն աներես չէր, ներս մտնել չէր համարձակեր. միայն դունչը մարմնույն հետ ավելի ներս կերկարեր, երբ մեկը պատահաբար իրեն մոտենար:

Չալոյին առջև շատ անգամ ամբողջ հա՛ց մը կնետեին, որովհետև փողոցին փորձառու պահակն էր. տուները կհսկեր: Տանիքներուն վրայեն շատ արագ անցնող հովն իսկ կիմացներ:

Չալոն՝ գոհ ու կուշտ, ետևի երկու ոտքերը կծալլեր. իր պոչին հետ, առջևի երկու ոտքերը երկնցուցած, սեմին քովը կպառկեր: Ան չէր շարժեր նույնիսկ, երբ հավերը պոչին վրայեն կանցնեին և կամ հավնագ մը անոր կոնակին վրա թառեր մեկ ոտի վրա:

«Պերեքեթով ըլլի, խաթո՛ւն»:

Չալոյեն հետո այս անգամ հացին հոտը առնողը կուզ մուրացիկն էր: Վախվխելով ձեռքին փայտը միշտ Չալոյին կողմը բռնած՝ կօրհներ տունն ու տավարները. ջահիլ հարսներուն երկար արև կբաղձար. Հայր Աբրահամու սեղանին առատությունը կցանկար բոլոր տուներուն: Մուրացիկը չէր տրտնջար, կօրհներ միևնույն անկեղծ բաղձանքով, եթե մերժեին նույնիսկ, սակայն խոշոր դռներով, մեծկակ ախոռով գեղացուն տունեն ո՞վ կրնար մերժել:

Չալոն աչքերուն տակեն կնայեր, կգմռտար, նույնիսկ տնեցիներուն ծառայություն մը մատուցած ըլլալու համար, քանի մը անգամ մուրացիկին վրա կհաչեր ու կլռեր, երբիր

անունը տային: Սակայն Չալոն միշտ կասկածոտ էր, կիսախուփ աչքերով. ատեն-ատեն վեր կառներ իր կոպերը ու կնայեր, մինչև որ հեռանար մուրացիկը:

Ամփոփիչ հարցեր

1. Ինչպիսի՞ տեսք ուներ մսագործ Կյուրեղը՝ ըստ շների: Ներկայացրո՛ւ նրա արտաքին նկարագիրը:
2. Ովքե՞ր են պատմվածքի հերոսները: Թվարկի՛ր:
3. Հեղինակը ինչպե՞ս է նկարագրում մորթվող այծին:
4. Ինչո՞ւ է Կյուրեղը մսի կտորները կեռերի վրա շարում:
5. Ո՞վքեր էին ժամավորները: Ի՞նչ խորհուրդ ունի եկեղեցին գյուղացիների համար:

Առաջադրանքներ և վարժություններ

1. Նկարագրի՛ր գյուղի առօրյան և մարդկանց՝ ըստ հեղինակային նկարագրության:
2. Արտահայտի՛ր քո կարծիքը պատմվածքի այս հատվածի վերաբերյալ:
3. Մեկնաբանի՛ր հետևյալ պատկերը. «Մատղաշ արևը, ճարպոտ մսի գույնով,- ինչպես կնկատեր Չալոն,- ցվիքներեն վար կկախվեր ու հետզհետե վար կուգար, կճերմկնար, կհասներ մինչև այծի փոստին, որուն վրա Կյուրեղ փոքրիկ կացինով այծի ոսկորները կոտրած ու ջարդած էր միսը, որ ներկված էր կարմիր ու ճերմակ գեղեցիկ գույներով»: Պատկերավորման ի՞նչ միջոց է կիրառել հեղինակը:
4. Արժևորի՛ր հատվածի արտահայտած հույզը և համեմատի՛ր քո զգացածի հետ:
5. Բնագրից դո՛ւրս գրիր մակդիրներն ու համեմատությունները (հատվածի):
6. Ներկայացրո՛ւ Գոթանենք հաց թխելու արարողությունը և Չալոյի «մասնակցությունը» դրան:
7. Մեկնաբանի՛ր այս արտահայտությունը. «Պերեքեթով ըլլի, խաթո՛ւն»: Նմանատիպ ի՞նչ արտահայտություններ գիտես, թվարկի՛ր:
8. Դատողություննե՛ր արա հատվածի վերաբերյալ:

3

Կեսօր է: Արևը Գոթանենց չարտախը ինկավ: Արևեն ու հացեն հետո այս անգամ ամբողջ փողոցը մանուկներու ձայնով բռնված էր: Մանուկները դպրոցեն կելլեին: Չալոն արտորանքով փողոց կելլեր՝ զվարթ հաչյուն մը ձգելով: Մանուկներուն հետ կխառնվեր. դունչը անոնց ձեռքերուն, փեշերուն, երեսներուն կքսեր: Մանուկները անոր հետ կխոսեին այնպես, ինչպես իրարու հետ, և չէին ուզեր հավատալ, թե Չալոն իրենց խոսածներեն շատ բան չէր հասկնար: Մինչև դպրոցին բակը կընկերանար մանուկներուն՝ անոնց հետ վազվզելով: Չալոն քանի մը անգամ փորձած էր մանուկներուն հետ եկեղեցի մտնել, սակայն զարմացած էր, թե ինչո՞ւ ներս չէին թողեր:

Ժապավեն կապող ու իրենց տերերուն հետ տոնավաճառ երթող քաղքենի շուներուն պես, Չալոն հնարամիտ ձևեր չուներ, սակայն մանուկները զայն շատ կսիրեին:

Չալոյին ընտանի ձայնը, մտերիմ դիմագիծը, մանավանդ չարաճճի կատակներու դիմացող բնավորությունը բավական էին, որ մանուկները իրենց հաց ու պանիրին կեսը անոր հետ բաժնեին ու փողոցին վրա անոր հետ ճաշի նստեին:

Մանուկները կհեծնեին անոր վրա, պոչը ու ականջները կքաշեին, բայց երբ հեռվեն շուներու գզվռտուքի մը ձայնը կլսվեր, Չալոն հանկարծ վար կթափեր իր վրա հեծած մանուկները, և կփութար կռվի վայրը. կպատահեր, որ այդ պահուն մանուկի մը գլուխը գետնին կզարնվեր, և լալեն մորը քով գանգատի կերթար:

«Ո՞վ զարկավ, զավա՛կս»:

«Չալոն»,- կպատասխաներ փոքրիկը և միտքը կդներ այլևս Չալոյին հետ չխոսիլ, քեն պահել:

«Չալո, Չալո»,- կկանչեր ճպռոտ երեսով Սրգոն:

Չալոն պատերուն տակեն քսվելով, խնդումերես, կմոտենար մանուկներուն ու անոնց քով կնստեր: Սրգոն կհաներ իր գդակը ու Չալոյին գլուխը կդներ. անոր ուսերեն կողմնակի կկախեր նաև քերականին պայուսակը ու հետո, քերականն անոր քթին դեմ բռնելով, կըսեր.-

«Կարդա՛, Չալո՝ Ա, Բ, Գ»:

«Ա, Բ, Գ»,- կկրկնեին մյուսները:

Չալոն լեզուն դուրս ձգած, հևալով անոնց երեսին կնայեր, ծույլ աշակերտի մը նայվածքով,- անորոշ ու բթամիտ: Սրգոն կնեղանար, կհաներ գլխարկն ու պայուսակը. Չալոյի երեսին ապտակ մը կիջեցներ այնպես, ինչպես վարժապետը հաճապ իջեցուցած էր իրենց երեսին: Ու հեղ մ՚ալ բոլորը մեկ կվազեին դպրոց: Չալոն ալ անոնց հետ մինչև դպրոցին դուռը կվազեր ու հետո՝ մռութը կախ՝ կվերադառնար, երբ դպրոցին դուռը կգոցեին իր դեմ:

Երեկոյին Գոթանենց փողոցին ռենճպերները, կերակուրնին գդալտելե հետո, դուրս կելնեին, իրարու ձայն կուտային ու կհավաքվեին ձեթ քարին քով: Հոն էին նաև Ուստա Զաքարը, երեցփոխն ու ջորեպան Թադոսը:

Անոնք իրենց ոտքերը ծալլած, պատին կռթնած, կողմնակի և կամ ստամոքսի վրա պառկած կխոսակցեին:

«Վախտնոք յոթը ջորիներով Տիարպեքիրի Մատենին որ մոտեցանք»,- կսկսեր Թադոս իր կյանքի հեքիաթունակ պատմութենեն:

Հեքիաթը դեռ չլմնցած, հեղ մ՚ալ տեսնես, քը՛սդ, կամաց մը կմոտենար նաև Չալոն ու շիփշիտակ անոնց շարքին կնստեր:

«Էդ ժամուն կոչնակը թըխ-թըխ է, Սահակ. սանկ, ձայնավոր կոչնակ մը չկախե՞ք»,- կխոսեր ռենճպերներեն մին՝ երեցփոխին:

Անկասկած Չալոն եթե գիտնար, որ երեցփոխը ինչ պաշտոն ունի եկեղեցիին մեջ, ինքն ալ ռենճպոր նման պիտի բողոքեր կոչնակի ձայնին մասին: Չալոն վաղուց նկատած էր, որ կոչնակին ձայնը հետզհետե կտկարանար. այդ իսկ պատճառով լուսնկան սկսած էր շատ դանդաղիլ ու գմբեթեն շատ ուշ հեռանալ:

Չալոն իր կյանքեն շատ բաներ ուներ պատմելիք, քան երեցփոխը:

Երեցփոխը գրեթե ոչինչ ըրած էր իր կյանքին մեջ. սիրած էր եկեղեցին և մեկ մըն ալ կաղամբի թուրշիով պատրաստած ձվածեղ. ահա բոլորը:

Իսկ Չալոյի կյանքը եղած էր արկածալից. ան կրնար իր կռիվներեն պատմել, գիշեր ժամանակ գողերեն ստացած վերքերը ցույց տալ: Ան կրնար, ծերացած ու քաչալ ասպետի մը պես, իր կյանքեն հեքիաթներ պատմել, եթե միայն իր վանկերը երեխայի և կամ ալիքի ձայներուն պես կցկտուր, անկապ չըլլային:

Չալոն անոնց խոսած երկար բառերեն շատ բան չէր հասկնար. անոնց դեմքերու մկանային շարժումները դիտելե ձանձրացած՝ կսկսեր ետևի մեկ ոտքով իր վիզը քերել: Սակայն ամեն անգամ, երբ երեցփոխը կխոսեր, Չալոն կդադրեցներ իր քերվտուքը, ականջները կշտկեր ու շեշտ կնայեր անոր դուրս ցցած կոկորդի ոսկորին, որ մաքոքի նման վեր-վար կիջներ, բառեր կգործեր:

Երեկոյին ուշ ատեն կբաժնվեին իրարմե: Է՜հ, մարդիկ բոլորն ալ հեռացան: Չալոն մինակ էր: Նորեն լռություն, նորեն լուսնկան: Չալոն իր մոխիրե անկողինը կշտկեր: Ա՜խ, նորեն իր այլանդակ երազները: Այդ գիշեր լուսնկային լայնության վրայեն սև կատու մը անցած էր՝ զգույշ քայլերով: Չալոն արթնցավ. ոռնաց... ախ, այս ժամկոչն ինչո՞ւ կուշանար:

***

Ամառվա տաք միջօրեի մը, գյուղը գրեթե ամայի էր, դպրոցը՝ փակված, գյուղացիները բոլորն ալ դաշտի աշխատանքի լծված էին: Շունները՝ շողուն, առվին եզերքները կպառկեին և կամ բաց մնացած տուներեն ներս, թաց ու զով տեղեր կապաստանեին: Չալոն դպրոցի ճամփուն վրա, միսմինակ, արևին տակ կեցած էր, անորոշ ու մելամաղձոտ:

Այդ օրը դպրոցի մանուկներուն ան իզուր սպասեց: Քանի մը անգամ մինչև դպրոցին դուռը գնաց. փակ էր. թաթերը դռան վրա՝ անորոշ աղմուկներ ըրավ: Դպրոցի բակը ամայի էր, ինչպես թափուր մնացած փեթակը մեղուներուն:

Աշխարհը ի՜նչ շուտ փոխվեցավ,- մտածեց Չալոն:

Անոթի էր: Դունչը՝ Գոթանենց բաց մնացած դռնեն ներս երկնցուց. մարդ չկար. հավերը միայն, բակին մեջ՝ անպետ ձգված երկրագործական գործիքներուն վրա թառած, սկսած էին ձայնավոր եղերական կրկռոց մը:

Ու տանիքին վրա անծեղ մըն ալ, փայտյա ձողի մը վրա թառած՝ կկանչեր խե՜-խե՜, ու խաթուն մամային օճառը գողնալու առիթի մը կսպասեր:

Չալոն քանի մը անգամ հաչեց. մարդ չկար:

Անտարակույս աշխարհը փոխված էր: Այդ օրը, չորրորդ անգամն ըլլալով, Չալոն Կյուրեղին խանութին առջև կանգնեցավ: Կեռերուն վրա ոչինչ չկար, միայն ուլի մը թոքը, ան ալ մեղուներուն ու ճանճերուն կեր դարձած. իսկ Կյուրեղ անդին կոշկակարին հետ խոսքի բռնված էր: Չալոն կամաց մը խանութեն ներս մտավ ու աճապարանքով՝ ուլի ոտք մը խածած՝ դուրս ելավ: Կյուրեղը տեսավ. հավար տվավ. մեծ դանակն առավ, վազեց ու շիտակ Չալոյի կռնակին իջեցուց:

Չալոն ձգեց ուլի ոտքը. վայնասունը ամբողջ գյուղը բռնեց՝ այնքան աղաչավոր, որքան հրդեհված նավի մը ընկղմումը:

Այդ օրը Չալոն ամբողջ օրը իր մոխիրե անկողնին վրա կզկզաց: Արյունը կիջներ. կփորձեր վերքը լիզել, սակայն վերքը թիկունքին վրա էր. երկար լեզուն հազիվ կհասներ:

Երեկոյին գյուղացիները դաշտեն գյուղ վերադարձան. նորեն՝ աղմուկ, նորեն կյանք. փողոցը ծիծաղով լեցվեցավ: Բայց այդ օրը Չալոն իր տեղեն չէր կրնար շարժիլ:

Քանի մը օր հետո Չալոն սկսավ քալել, ուռեցած վերքով. այլևս Կյուրեղի խանութին առջև երթալ չէր համարձակեր: Հեռվեն, երբ Կյուրեղի ոտնաձայնը կլսեր և կամ անոր յուղոտ շապիկին հոտը կառներ, Չալոն՝ պոչը փորին կպցուցած՝ կաճապարեր սայլին տակ մտնել:

Ամփոփիչ հարցեր

1. Ինչպիսի՞ն էր գյուղական դպրոցը:
2. Նկարագրի՛ր դպրոցում սովորող երեխաներին, նրանց հետաքրքրությունները:

3. Ի՞նչ վերաբերմունք ունեին երեխաները Չալոյի հանդեպ: Ասածդ հաստատի՛ր բնագրից բերված օրինակներով:
4. Ինչպիսի՞ն է Չալոն քո պատկերացմամբ:
5. Ինչո՞ւ է հեղինակը նրան անձնավորել:
6. Ի՞նչը ստիպեց Չալոյին կանգնել Կյուրեղի խանութի առջև, և ի՞նչ տեղի ունեցավ դրանից հետո:

Առաջադրանքներ և վարժություններ

1. Վերաշարադրի՛ր հատվածը բնագրից վերցրած հենակետային կամ բանալի բառերի միջոցով:
2. Մեկնաբանի՛ր այս միտքը. «Չալոն իր կյանքեն շատ բաներ ուներ պատմելիք, քան երեցփոխը», և արտահայտի՛ր քո կարծիքը՝ ինչո՞ւ:
3. Հեղինակը ի՞նչ պատկերներով է ներկայացնում Չալոյի առօրյան:
4. Արտահայտի՛ր քո վերաբերմունքը, քո կարծիքը Կյուրեղի արարքի նկատմամբ:
5. Ի՞նչ միտք ծագեց հատվածը ընթերցելիս: Գրի՛ր քո մտահոգությունների մասին:
6. Նկարի՛ր Չալոյին՝ ելնելով հեղինակային նկարագրություններից:
7. Արդարացրո՛ւ Կյուրեղի և Չալոյի արարքները:
8. Դատապարտի՛ր նրանց արարքները:
9. Մեկնաբանի՛ր՝ ինչու է Համաստեղը իր պատմվածքը վերնագրել «Չալո»:
10. Մեկ նախադասությամբ ձևակերպի՛ր «Չալո» պատմվածքի բովանդակությունը:
11. Դո՛ւրս գրիր և ներկայացրո՛ւ բնագրի դրական ու բացասական իմաստով (հակադիր) գործածված մակդիրները:

Դրական	Բացասական

12. Մակդիրները գործածելով՝ գրի՛ր շարադրություն՝ «Իմ շունը» վերնագրով:

4

Չալոյին վերքը հետզհետե որդնոտեցավ, այլևս անտանելի դարձավ: Երբ տուն մը մտներ, տնեցիները իրար կանցնեին, փայտի անխնա հարվածներով Չալոն դուրս կձգեին: Գոթանենց դուռը անոր դեմ գոցեցին իսպառ. պատահաբար ներս որ մտներ, անոր ետև տան երկաթե ակիշը և կամ ավելը կնետեին: Անոր վերքը անտանելի էր:

Չալոն՝ այլևս կծկված, փողոցին վրա, անպետ, գլանը կոտրած սայլին տակեն դուրս ելլել չէր համարձակեր: Կվախնար մարդերե:

Չալոն սայլին տակ կմախք դարձավ. կռնակը աղեղնաձև, մազերը սկսան թափիլ. մորթը շերտ-շերտ կողերուն մեջ մտավ: Երբեմն միայն սայլին տակեն դուրս կելլեր, երբ փողոցը մարդ չկար, ու քնեն նոր արթնցած, աչքերը շեղված, աղտոտ մանուկի մը ձեռքեն կխլեր խոշոր հացի կտոր մը ու նորեն կպահվեր:

Շատ անգամ, իրեն շատ ծանոթ մանուկները, սայլին շուրջը հավաքված, կխաղային, նույնիսկ իրեն անունը կկանչեին:

Չալոն կլսեր անոնց ձայնը: Ա՜խ, ո՜րքան կսիրեր դուրս ելլել, անոնց ձեռքերը լիզել, նորեն բարեկամ ըլլալ անոնց հետ: Մարդիկ ի՞նչ շուտ չար եղան:

Չալոն գլուխը վեր կառներ պահ մը ու հետո՝ լեզուն կախ՝ աչքերը միշտ գետնին կմնար մտածկոտ: Ան քեն ըրած էր նաև մանուկներուն. որովհետև եղած էին չարեր, որ իր ետև քար նետած էին. նույնիսկ փորձած էին իր պոչեն թիթեղե հին դույլ մը և կամ ծանր քար մը կապել:

Աշխարհ փոխված էր, ու Չալոն չհասկցավ, թե ինչու իրեն համար այս անգամ լուսնկան ու մենությունը ավելի մխիթարական էին, քան ցորեկները: Գիշերները միայն, երբ այլևս մարդ չկար փողոցները, Չալոն սայլին տակեն դուրս կելլեր, նույնիսկ մինչև Կյուրեղի խանութին մոտերը կերթար ու կթափառեր քնաշրջիկի մը պես:

Գիշեր մը Չալոն ավելի հեռացավ, գյուղեն դուրս ելավ ու ինքզինք տարբեր աշխարհի մը մեջ գտավ: Հոն տուներ չկային, զինք սարսափեցնող ոտնաձայներ չկային, հոն չկար գմբեթ: Այնտեղի լուսնկան բարտիի մը ծայրեն կախված էր, ու մտավ կանեփներուն մեջ:

Չալոն հեռացած էր մարդերեն, մարդերեն ստացած վերքը՝ կոնակին:

Ամեն կես գիշերին, երբ գյուղին վրա աստղերու լռությունը կախված էր, կանեփներեն և կամ չինձված ցորյաններեն կլսվեր ահավոր ոռնուկ մը.

- Ուաո՜ւ... ուաո՜ւ... ուաո՜ւ...

Չալոն կանեփներեն դուրս կուգար, գիշեր ատեն, լուսնկին տակ, իր ոսկրուտ, աղեղնաձև կոնակով՝ ապառաժի մը վրա տեղավորված՝ այս անգամ դունչը դեպի գյուղ, կոռնար: Անոր ձայնը աստղերեն աստղ կդղրդար. կարծես Նիրվանայի հավիտենական պարապության մեջ ըլլար:

Հո՜ֆ, հո՜ֆ, հո՜ֆ... Չալոյի ծեր ձայնն էր:

Գիշերի ամայության մեջ անոր հաչյունը կձգեր չոփ-չոր արձագանք մը: Ան գիշեր ատեն մինչև գյուղ կիջներ, երբ ամեն ինչ լուռ էր, երբ լուռ էին փողոցի շունները: Ու կքալեր, լենք, լենք ամայի փողոցներեն, ինչպես անոթի ու նիհար գայլը անտառին: Ան շատ անգամ շուներու լակոտներ էլ հափշտակեր, ու կմտներ կանեփներու մեջ:

Գյուղացիները կսարսափեին անոր ձայնեն: Անդապահը կհետապնդեր զայն՝ սպանելու համար. մանավանդ որ ցորեկ մը, պոչը փորին տակ պահած, վիզը՝ կախ, կանեփներեն դուրս ելած էր ու, գաղտուկ անցորդի մը քսվելով, խածած էր անոր սրունքը: Խածած էր նաև թումբերեն խոտ քաղող քանի մը գյուղացի կիներու կրունկները:

Չալոն կատղած էր. անոր բերնին շուրջը փրփուր տեսած էին:

Անդապահեն զատ կհետապնդեին զայն գյուղին բոլոր մշակները:

Երեկո մը Գոթանենց մշակը տեսած էր զայն հոսող առվի մը մեջ պառկած. արագ-արագ կհևար: Չալոն, երբ տեսած էր մշակին մոտենալը, ծանր-ծանր փախած էր հեռու և հոն՝ հորիզոնին վրա վերջալույսին ներքև ծվարած՝ սպասած էր, մինչև որ դաշտի բանվորները գյուղ վերադառնային:

Անգամ մը անդապահը հետապնդած էր, սակայն կանեփներուն մեջ կորսնցուցած էր անոր հետքը: Երկրորդ անգամ ատրճանակի գնդակը վրիպած էր, իսկ երրորդ անգամ գնդակը մարմնույն մեջ էր մտած, սակայն չէր վնասած:

Աշուն էր: Նույնիսկ հնձվեցան կանեփները: Արագիլները՝ իրենց վիզերնին տնկած՝ իրարու ետևե՝ Չալոյին վրայեն վաղուց անցած էին: Չալոն դաշտերեն քաշված՝ այս անգամ քարայրներուն մեջ կապրեր:

Մութ գիշեր էր, Չալոն նորեն գյուղ իջավ: Ձայն ձուն չկար. տանիքներեն վեր, տարածության մեջ ուշ մնացած ագռավի սև թև մը միայն կշարժեր:

Չալոն, դունչը գետնին, պատերուն տակեն ծանր-ծանր կելեր. անոր աչքերուն մեջ կարծես վառված ոսկորներու կանաչորակ բոց մը կծխար: Կյուրեղի խանութին առջև կեցավ պահ մը: Անցավ ձեթ քարին քովեն, ուր հաճախ ժողովի նստած էր գյուղի մեծամեծներուն հետ, ու մտավ Գոթանենց փողոցը, որ իր փողոցն էր. կանգնեցավ այն ճամփուն վրա, ուրկե ժամկոչը կանցներ, կանցնեին ժամվորներն ու մանուկները դպրոցին:

Չալոն, քանի մը անգամ պատերուն վրա միզելե հետո, նորեն քարայրները պիտի վերադառնար, երբ հանկարծ ցվիքին վրա շարժող ստվեր մը նշմարեց: Չալոն շարժեց ականջները, նկատեց նաև երկու ուրիշ ստվերներ, որոնք փողոցին վրա իրարու մոտ կուգային ու կհեռանային: Ա՜հ, մութին մեջ անոնց հասակները ո՜րքան երկար կերևեին: Չալոն հարձակեցավ անոնց վրա ու լախտի ծանր հարվածներեն ետ մղվեցավ. նորեն հարձակեցավ, անոր ձայնակցեցան փողոցին շուները:

Հեղ մըն ալ, պո՜ւմ... լսվեցավ հրացանի պայթյուն մը. հետո՝ կարճ վայնասուն մը ու փախչող ոտքերու ձայներ:

Դրացիները արթնացան, դուրս թափվեցան ճրագներով ու գտան Գոթանենց լավագույն եզը՝ Պորոն, փողոցին վրա կեցած, անտարբեր, իր փնջածակերուն հարդերը կմաքրեր: Գողերն իրենց ավարը թողուցեր ու փախեր էին:

Քանի մը քայլ հեռու, հոն, սայլերուն քով, գտան նաև շատատ նիհարցած ու ծեր շան մը դիակը:

Ճանչցան:

Չալոն էր:

Գողերը գնդակով սպանած էին:

Ամփոփիչ հարցեր

1. Ի՞նչ էր փոխվել Չալոյի կյանքում: Ինչո՞ւ:
2. Ինչո՞ւ գյուղացիները իրենց վերաբերմունքը փոխեցին Չալոյի հանդեպ:
3. Ինչո՞ւ Չալոն հեռացավ գյուղից:
4. Ինչպե՞ս Չալոն հեռացրեց գողերին և փրկեց Գոթանենց լավագույն եզին:
5. Ի՞նչ վախճան ունեցավ Չալոն: Արտահայտի՛ր քո հույզերը նրա արարքի հանդեպ:

Առաջադրանքներ և վարժություններ

1. Ներկայացրո՛ւ «Չալոն» պատմվածքի բովանդակությունը և արտահայտած գաղափարը:

Բովանդակությունը	Գաղափարը

2. Մեկնաբանի՛ր այս պատկերը և արտահայտի՛ր վերաբերմունքդ. «Աշխարհ փոխված էր, ու Չալոն չհասկցավ, թե ինչու իրեն համար այս անգամ լուսնկան ու մենությունը ավելի մխիթարական էին, քան ցորեկները: Գիշերները միայն, երբ այլևս մարդ չկար փողոցները, Չալոն սայլին տակեն դուրս կելլեր, նույնիսկ մինչև Կյուրեղի խանութին մոտերը կերթար ու կթափառեր քնաշրջիկի մը պես»:

3. Կարդա՛ «Չալոն» պատմվածքը ամբողջությամբ և արտահայտի՛ր վերաբերմունքդ՝ պատասխանելով քառաբաժանի հարցերին:

1. Բնութագրող Բնութագրի՛ր պատմվածքի գլխավոր հերոսին:	2. Զգացմունքներ արտահայտող Ի՞նչ զգացումներ ունեցար պատմվածքը կարդալուց հետո:
3. Կենսափորձ Բանաստեղծության բովանդակությունը ի՞նչ հիշեցրեց քեզ: Ի՞նչ համանման պատմություն ես ընթերցել կամ կինոնկար դիտել:	3. Իմաստավորում Նոր վերնագի՛ր դիր յուրաքանչյուր հատվածին՝ բովանդակությունից ելնելով:

4. Պատմվածքի վերնագիրը կապի՛ր բովանդակության հետ և մեկնաբանի՛ր գաղափարը:
5. Քո կարծիքով այս պատմվածքը քանի՞ գաղափար է արտահայտում, ինչո՞ւ:
6. Համեմատի՛ր պատմվածքը քեզ ծանոթ այլ ստեղծագործության հետ, ներկայացրո՛ւ քո դիրքորոշումը:
7. Արժևորի՛ր պատմվածքի արտահայտած հույզը և համեմատի՛ր քո զգացածի հետ:
8. Դո՛ւրս գրիր գեղարվեստական պատկերավորման միջոցները և դրանք ստեղծագործաբար կիրառի՛ր գրավոր կամ բանավոր խոսքում:
9. Ըստ քեզ՝ որն է եղել պատմվածքը գրելու շարժառիթը: Ներկայացրո՛ւ ստեղծագործության ժանրային առանձնահատկությունը:

Գրականության մեջ հաճախ է պատահում, երբ հեղինակը ոչ թե հեքիաթ, այլ պատմվածք է գրում, բայց նրա գլխավոր հերոսը կենդանի է: Եվ եթե հեքիաթներում կենդանիներն իրականում մարդկանց են խորհրդանշում՝ այլաբանորեն ցույց տալով մարդկային բնավորության այս կամ այն գիծը, ապա պատմվածքներում պատկերավորումն առավել ռեալիստական է, և հաճախ կենդանու կերպարը հենց հակադրվում է մարդկանց կամ մարդկային հասարակության արատներին: Այսպես՝ Չալոն ծերացած, «իմաստնացած» մի շուն է, որին ողջ գյուղն է ճանաչում: Երեխաները սիրում են նրա հետ խաղալ, իսկ ժամկոչի խնկաբույր փեշերին քսմսվելը, մարդկանց աշխարհում ապրելը շան համար է երանություն՝ մղձավանջներ բերող լուսնի տակ միայնակ անցկացրած տխուր գիշերներից հետո:

Բայց ահա վիրավորում ստանալուց հետո Չալոյի կյանքը հետզհետե փոխվում է: Իրենց հոգսերով տարված գյուղացիները կարծես թե մոռանում են շանը խնամել: Չալոյի վերքը չի լավանում, ոտքը սկսում է քայքայվել ու գարշահոտություն տարածել, և հիմա բոլորը, անգամ երեխաները, խուսափում են նրանից: Մարդկանց աշխարհում կենդանին իրեն միայնակ է զգում և հեռանում գյուղից: Օրեցօր նա ավելի է մոլեգնում, գյուղից շան քոթոթներ գողանում:

Բոլորը սկսում են վախենալ երբեմնի անմեղ ու անվնաս Չալոյից, փորձում են սպանել նրան: Շունը, սակայն, վերջին շնչում էլ մի օգուտ է թողնում աշխարհին: Կրկին գյուղում հայտնվելով՝ մի տուն է փրկում գողությունից, իսկ գողերը, վախից կրակելով կենդանու վրա, սպանում են նրան:

Ահա այսպես: Անլեզու կենդանիները, որոնց խնամակալն ու պաշտպանը մարդը պետք է լիներ, երբեմն իրենք են իրենց վարքով խրատ ու դաս տալիս մարդկանց:

«Սպիտակ ձիաւորը» վեպի ձեռագիրը